ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի
համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Ջրարբի ,

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

N 80
09 օգոստոս 2016թ.

Հարգարժան պարոն Ղահրամանյան.

Ի կատարումն «Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասի՝ Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Ջրարբի համայնքի ավագանու 2016 թվականի օգոստոսի 2-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբիի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 13-ի N 56-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> N 37-N և համայնքի ղեկավարի <<Ջրարբի համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը մրցույթով վարձակալության տրամադրելու մասին>> N19-Ն որոշում:

Միաժամանակ հայտնում ենք, որ նշված որոշումը սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական փորձաքննության:
Առդիր 3 թերթ:

Համայնքի ղեկավար՝ **Ղազար Ղազարյան**

Կատ. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. Արեյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 օգոստոսի 2016թվականի N 37-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ երկրորդ մասի 1-ին կետով, հինգերորդ և վեցերորդ մասերով , հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 13-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբիի գյուղական համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2016 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին >> N 56-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԻԱՍՅԱՆ ԱԶԱՏ
2. ԲԱԲԱՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՐԻՆԵ
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԱՆ
6. ՓԱԼԱՆԴՈՒԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

Համայնքի ղեկավար / ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

<<ՀԱՎԵԼՎԱԾ N2
ԶՐԱՐԲԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N 56-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՐԲԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԶՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ԶԵՂՉԵՐԻ ՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զրարբիի գյուղական համայնքի «Զրարբի համայնքի մնկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հաճախող մեկ երեխայի ամսական վարձավճարի չափը սահմանել 5000 (հինգ հազար) դրամ:

1) Համայնքում հաշվառում չունեցող, այլ համայնքներից հաճախող մեկ երեխայի ամսական վարձավճարի չափը սահմանել 8000 (ութ հազար) դրամ:

ա) համայնքում հաշվառում չունեցող, այլ համայնքներից հաճախող միևնույն ընտանիքից երկու երեխա հաճախելու դեպքում սահմանել զեղջ ՝ յուրաքանչյուր երեխայի համար 1000 / մեկ հազար/ դրամ

2. Սահմանել վարձավճարի զեղչ 50 %-ի չափով՝ հետևյալ դեպքերում.

1) միևնույն ընտանիքից երեք և ավելի երեխա մանկապարտեզ հաճախելու դեպքում՝ երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար.

2) հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքների երեխաների համար.

3) միակողմանի ծնողազուրկ երեխաների համար :

3. Երկկողմանի ծնողազուրկ երեխաներն ազատվում են վարձավճարից >>:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 օգոստոսի 2016թվականի N 19-Ն

ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԿԱՆԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ և 78-րդ հոդվածների դրույթներով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ինմասի 2-րդկետով, ՀՀկառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի օգոստոսի 2-ի N 36-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.2016 թվականի սեպտեմբերի 2-ին՝ ժամը 10 00 -ին, Ջրարբիի համայնքապետարանի շենքում անցկացնել մրցույթ՝ գյուղատնտեսական նշանակության հողամասերը 12 տարով վարձակալության տրամադրելու համար:
2.Հողամասի վարձակալության իրավունքի տրամադրումը իրականացնել մրցույթով:
3.Լոտ 1 ծածկագիր 04-086-0101-0074, 1.2432 հա գյուղատնտեսական նշանակության վարելահող, մերձարաքսյան գոտում , մեկնարկային գինը՝18000 /տասնութ հազար/ՀՀ դրամ:
4.Լոտ 2 ծածկագիր 04-086-0101-0075, 1.1517 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք , մեկնարկային գինը՝17000 / տասնյոթ հազար/ ՀՀ դրամ:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ղեկավար՝ ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

2016 թվականի օգոստոսի 2
գ.Ջրարբի